

Որեւէ առարկայի վերաբերեալ մեր մտքերում կատարեալ պարզութիւն մտցնելու համար մենք միայն պէտք է հաշուի առնենք այն հնարաւոր գործնական (պրակտիկ) արդիւնքները, որ այդ առարկան կարող է ունենալ, այն զգացումները, որոնք կը ծնուեն եւ այն հակագոյցութիւնը, որը պէտք է պատրաստենք: Այս արդիւնքների մասին մեր հասկացողութիւնը, լինի այն ուղղակի թէ անուղղակի տուեալ առարկայի վերաբերեալ մեր ողջ հասկացողութիւնն է այնքանով, որքանով այդ հասկացողութիւնը ընդհանրապէս ունի որեւէ դրական կարելորութիւն (նշանակութիւն):

Զարմանալի է, թէ որքան իմաստասիրական վէճեր կարող են արժեզրկուել, երբ փորձենք մատնանշել նրանց յստակ հետեւանքները: Որեւէ ոլորտում առկա ինչ-որ տարբերութիւն չի կարող տարբերութիւն չտալ որեւէ այլ ոլորտում: Աբստրակտ ճշմարտութիւն մէջ չկայ որեւէ տարբերութիւն, որն իբրեւ տարբերութիւն չարտայայտուի կոնկրետ փաստի եւ նրանից բխող վարքի պարագայում՝ կիրառուած ինչ-որ մէկի նկատմամբ, ինչ-որ ժամանակ, ինչ-որ ձեւով, ինչ-որ տեղ: Իմաստասիրութեան ամբողջ գործառոյթը պէտք է լինի այն յստակ տարբերութեան պարզումը, որը գոյութիւն ունի ինձ եւ քեզ համար, եթէ, կեանքի որոշակի պահերի, այս կամ այն համընդհանուր բանաձեւը ճշմարիտ լինի:

Սա ամենեւին էլ նորոյթ չէ պրագմատիկ մեթոդի համար: Սոկրատը դրանում հմուտ էր: Արիստոտելն այն օգտագործում էր պարբերաբար: Լոկը, Բերկլին եւ Հիւմը դրա միջոցով կարելոր ներդրումներ են կատարել ճշմարտութեան բացայայտման համար:

Աշխարհն ի՞նչ առումներով կարող է տարբեր լինել, եթէ այս կամ այն այլընտրանքը ճշմարիտ լինէր: Եթէ ես չեմ կարող գտնել, նշել որեւէ փոփոխութիւն, ապա այլընտրանքն անիմաստ կը լինի:

Իմաստասիրութեան մէջ պրագմատիզմը առաջադրում է բաւականին ծանօթ մի մօտեցում՝ էմպիրիկ մօտեցում, սակայն, ինչպէս ինձ է թւում, աւելի արմատական եւ ընդունելի ձեւով քան երբեւէ: Պրագմատիստը միանգամայն ժխտում է արհեստավարժ փիլիսոփաներին հարազատ կարծրացած սովորութիւններից շատերը: Նա մերժում է աբստրակցիան եւ անբաւարարութիւնը, բանաւոր լուծումները, վատ *a priori* պատճառաբանումները, ֆիքսուած սկզբունքները, փակ համակարգերը, թուացեալ բացարձակները եւ սկզբնաղբիւրները: Նա ողջունում է կոնկրետութիւնը եւ նպատակայարմարութիւնը, փաստերը,

գործողությունները, իշխանությունը: Մա նշանակում է էմպիրիկի հոգեվիճակի գերակայություն եւ ռացիոնալիստի հոգեվիճակից հրաժարում, բնութեան լայն հնարաւորությունների օգտագործում, ի տարբերություն դոգմաների, արհեստականի եւ ճշմարտութեան վերջնական լինելու պատրանքի:

Միեւնոյն ժամանակ, այն չի տալիս յստակ արդիւնքներ: Այն պարզապէս մեթոդ է: Սակայն այդ մեթոդի յաղթանակը կը բերի հսկայական փոփոխություն իմ նախորդ դասախօսությունում նշուած “փիլիսոփայութեան խառնուածքում”:

Եթէ հետեւես պրագմատիկ մեթոդին, ապա չես կարող բառի յայտնաբերմամբ աւարտել քո որոնումները: Ամէն մի բառից պէտք է ստանաս իր պրակտիկ արժէքը, քո փորձառութեամբ գործի դնես այն: Դա ոչ այնքան լուծում է, որքան յետագայ գործունէութեան ծրագիր, որքան առկայ իրականությունը փոփոխելու հնարաւորությունների դրսեւորում:

Այդպէս տեսությունները դառնում են գործիքներ, եւ ոչ առեղծուածների պատասխաններ, որոնցով կարող ենք բաւարարուել:

Մեր մտքերի ճշմարտութիւնը նրանց “աշխատելու” ունակութիւնն է:

Տիպիկ ինտելեկտուալ մտքի համար այս պրագմատիկ խօսքերը ճշմարտութեան բազմազանութեան մասին, նրանց օգտակարութեան եւ գոհացուցիչ (բաւարար) լինելու, նրանց յաջող “գործելու” մասին թւում են մօտաւոր, պայմանական դիտարկումներ, որոնք ոչ մի առընչութիւն չունեն ճշմարտութեան հետ: Նման դիտարկումները սուբյեկտիւ են: Ի տարբերութիւն սրա, օբյեկտիւ ճշմարտութիւնը պէտք է լինի ոչ օգտապաշտ, ինքնաբաւ, նուրբ, վսեմ, փառաւորուած: Այն պէտք է լինի մեր մտքերի բացարձակ համապատասխանեցումը նոյնքան բացարձակ իրականութեան հետ: Դա պէտք է լինի այն, ինչ մենք պէտք է մտածենք, առանց պայմանների: Մեր մտածելակերպի սահանուած ձեւերը կարելոր չեն: Դա հոգեբանութեան խնդիրն է: Կորչե՛ հոգեբանութիւնը, կեցցե՛ տրամաբանութիւնը, այս բոլոր հարցերում:

Տե՛ս մտքի տեսակների նուրբ տարբերությունները: Պրագմատիստը կարչում է փաստերից եւ յստակութիւնից, դիտարկում է ճշմարտութիւնը գործնականում եւ կատարում ընդհանրացումներ: Ճշմարտութիւնը նրա համար բոլոր այն երեւոյթներն են, որոնք գործնականում արժէք ունեն: Ռացիոնալիստի համար ճշմարտութիւնը մնում է պարզ արստրակցիայ, որի անունը պաշտամունքի առարկայի են վերածել: Երբ պրագմատիստը փորձում է մանրամասն պարզել, թէ ինչու պէտք է յարգենք ճշմարտութիւնը, ռացիոնալիստը ունակ չէ գիտակցել այն կոնկրետ երեւոյթները, որոնցից բխում է իր արստրակցիան:

Նա մեղադրում է մեզ ճշմարտությունը ժխտելու մեջ, երբ մենք պարզապես փորձել ենք պարզել, թե ինչու են մարդիկ հետեւում ճշմարտությանը, եւ ինչու պէտք է միշտ հետեւեն: Տիպիկ ուլտրա-աբստրակցիոնիստը սարսափում է յստակությունից: Միանման պայմաններում, նա նախընտրում է գունատն ու եթերայինը: Եթէ նա կանգնած լինէր երկու աշխարհերնի ընտրության առջեւ, նա անպայման կընտրէր բարակ ուրուագիծը խիտ մացառոտ իրականության փոխարէն: Այն շատ աւելի պարզ է, վճիտ, վեհ:

Ռացիոնալիզմը կապուած է տրամաբանության եւ դրախտայինի հետ: Էմպիրիզմը կառչած է արտաքին զգայարաններից: Պրագմատիզմը պատրաստ է ընդունել ցանկացած օգտակար բան, հետեւելու թե՛ տրամաբանությանը, թե՛ զգայարաններին եւ հաշուի առնելու ամենահամեստ եւ անձնական փորձառությունները: